

„ՍԳԿԿ“, ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Ջիվանշիր Աֆյանի կողմից, հնարավոր՝ վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի, Հարություն Գևորգյանի, Արմինե Մովսիսյանի և Արմենակ Աղամյանի քննարկելով ըստ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ դիմումատու/ Ջիվանշիր Աֆյանի /այսուհետ կառավարիչ/ նկատմամբ՝ 12.02.2025թ.-ին ներկայացված դիմումի, որոնք հասցեագրված էն եղել „ՍԳԿԿ“, ԻԿԿ-ի դիտորդ խորհուրդի նախագահ՝ Տիգրան Սահակյանին, պարզեց, որ ներկայացված դիմումի առնչությամբ „Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի „3,-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, կառավարիչի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ: Կառավարիչի կողմից, վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով, 06.03.2025թ.-ին նշանակվել է կարգապահական հանձնաժողովի նիստ:

Նշված նիստին ներկա էին հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը, հանձնաժողովի անդամներ Լուսինե Սարգսյանը, Հարություն Գևորգյանը, Արմինե Մովսիսյանը, Արմենակ Աղամյանը, դիմումատուի ներկայացուցիչ, տնօրեն՝ Արաիկ Ստեփանյանը և սնանկության գործով կառավարիչ՝ Ջիվանշիր Աֆյանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը նիստի մասնակիցներին հայտնեց, որ „Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3. հոդվածի և կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարիչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.2 կետի հիմքով նիստի անցկացման քվորումը ապահովված է և կարող են սկսել դիմումի քննարկումը:

Նախ Ա.Սարգսյանը առաջարկեց դիմումի քննարկման նպատակով սահմանել հետևյալ հերթականությունը, այն է՝ նախ լսել դիմումատուին, այնուհետև հարցերի դեպքում այն ուղղել դիմումատուին, այնուհետև լսել կառավարիչին և հարցերի դեպքում այն ուղղել կառավարիչին և այնուհետև հանձնաժողովը անցնի կարծիքների արտահայտմանը և այդ կարծիքներից ելնելով, կայացնել որոշում կարգապահական տույժ կիրառելու կամ այն կարճելու վերաբերյալ: Հանձնաժողովի անդամների կողմից, նշված առաջարկը ընդունվեց միաձայն:

Դիմումատուի կողմից հանձնաժողովին ներկայացվեց դիմումը, որով դիմումատուն նշել է, որ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից, դեռևս 2015թ. հուլիսին «Արտյոմ-Արտուշ եղբայրներ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Բելլա Հակոբյանի պատվերով իրականացրել և մատուցել է գույքերի շուկայական գնահատման ծառայություն: Ըստ ընկերության ունեցած

տեղեկությունների, տվյալ սնանկության գործը Բ.Հակոբյանի վարույթում է եղել 2014թ-ից եւ գնահատվել է ՀՀ Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց թիվ 136 բնակելի տունը եւ տնամերձ հողամաս հասցեում գտնվող շուրջ 350.5քմ եւ 0.075 հա մակերեսներով անշարժ գույքն ինչպես նաեւ ընդհանուր թվով 8/ութ միավոր ավտոտրանսպորտային միջոցները: Նշյալ գույքերի շուկայական արժեքների վերաբերյալ, ընկերության կողմից 16.07.2015թ.-ին պատվիրատուին են հանձնվել թիվ ԲՀ15/01/01 եւ թիվ ԲՀ15/01/02 գնահատման հաշվետվությունները, որոնց հիմքով հայտարարվել է աճուրդ եւ ընկերության ունեցած տեղեկությունների համաձայն գույքերն օտարվել են, սակայն մինչ օրս ծառայությունների մատուցման ծախսի վճարում չի իրականացվել: Դիմումատուն խնդրել է հայտնել արդյոք բաշխման ծրագրով փորձաքննության ծախսը ներառվել է թե՛ ոչ, եթե՛ ոչ ապա՝ ինչու՞ մն է կայանում թերացումը եւ /կամ անփութու- թյունը, իսկ եթե այո, ապա ինչու՞ մինչ օրս ընկերությանը չի վճարվել ծառայության մատուցման ծախսը եւ ում կողմից են դրանք մինչ օրս տնօրինվում: Ելնելով վերոգրյալից դիմումատուն խնդրել է գործադիր մարմնի ղեկավարին հետեւողականություն ցուցաբերել նշված հարցի վերաբերյալ եւ սնանկության գործով կառավարչի նկատմամբ կիրառել համապատասխան օրենքով սահմանված միջոցառումներ, փորձաքննության ծախսի գումարի վճարումն փորձագիտական հաստատությանը ապահովելու համար: «Արտյոմ-Արտուշ եղբայրներ» ՍՊԸ սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգահական վարույթ հարուցել եւ փորձաքննության ծախսի վճարները փորձագիտական ընկերությանը հատուցելու վերաբերյալ:

Կառավարիչ Ջիվանշիր Աֆյանի կողմից ներկայացվել էր դիմումի պատասխան, որով վերջինս իր դիրքորոշմամբ հայտնել է, որ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 13.09.2013թ.թիվ ԿԴ/0016/04/13 վճռով /դատավոր՝ Տ.Փոլադյան/ «„Արտյոմ-Արտուշ եղբայրներ,, ՍՊ ընկերությունը /ՀՎՀՀ՝ 03527607 / ճանաչվել է սնակ և նույն դատարանի 15.11.2013թ. որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Բելլա Հակոբյանը: Դատարանի 18.02.2014թ. որոշմամբ հաստատվել է պարտապանի պահանջների վերջնական ցուցակը հետևյալ կերպ.

Հ/Հ	Պարտատիրոջանվանումը	Պահանջիչափը	Պահանջների հերթը
1.	«Արդշինբանկ» ՓԲԸ	107,174,454.1	Ապահովված պահանջ
2.	ՀՀ ՊԵԿ	500,000	չապահովված <դ> հերթ
3.	ՀՀ ՊԵԿ	94,310,951	չապահովված <ե> հերթ
4.	ՀՀ տրանսպորտի վարչություն	160,000	չապահովված <ե> հերթ

Ըստ կառավարիչի կողմից տրված դիրքորոշման, 03.04.2014թ. Բ.Հակոբյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել է <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի հիմքով և դատարանի 22.04.2014թ. որոշումով սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Խաչիկ Նազարյանը: 21.05.2014թ. Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ: Այնուհետև 11.08.2014 թվականի որոշմամբ, <<Արտյոմ-Արտուշ եղբայրներ>> ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի պարտականությունները դադարեցվել է և Բելլա Հակոբյանը վերականգնվել է, որպես թիվ ԿԴ/0016/04/13 սնանկության գործով կառավարիչ: Իր դիրքորոշմամբ կառավարիչը նշել է նաև, որ դատարանը 27.07.2015թ. որոշմամբ

պարտապանի գույքն աճուրդով վաճառելու մասին որոշում է կայացրել, իսկ դատարանի որոշմամբ դադարեցվել է Բելլա Հակոբյանի լիազորությունները՝ մահվան պատճառով և նույն դատարանի 21.01.2016 թվականի որոշմամբ ինքը՝ Զիվանշիր Աֆյանը նշանակվել է թիվ ԿԴ/0016/04/13 սնանկության գործով կառավարիչ:

Իր դիրքորոշմամբ կառավարիչը նշել է, որ նախկին հանգուցյալ Բ.Հակոբյանի կառավարչի օգնականը սնանկության գործը փոխանցել է նրան, մինչդեռ ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ որոշ փաստաթղթեր, այն է՝ պարտապանին պատկանող շարժական գույքերի և երրորդ անձանց պատկանող և <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ի գրավի առարկա հանդիսացող գույքերի գույքագրման ակտերը և կից փաստաթղթերը՝ այդ թվում ընկերությանը վերաբերվող հաշվապահական և այլ ֆինանսական բոլոր փաստաթղթերը ի սպառ բացակայում էին: Ելնելով վերոգրյալից կառավարիչը գրավոր դիմել էմ դատավոր Ա.Բաբայանին խնդրելով թույլատրել ուսումնասիրելու և պատճենահանելու թիվ ԿԴ/0016/04/13 սնանկության վարույթի նյութերը: Հատկանշական է այն հանգամանքը, որ իր դիրքորոշման մեջ գործի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գործում առկա չէ ընկերության գույքի գնահատման ակտը, սնանկության գործով կառավարչի և գնահատող ընկերության միջև կնքված վճարովի ծառայության մատուցման պայմանագիրը, ինչպես նաև իրականացված ծառայության ընդունման-հանձնման ակտը, որի պայմաններում հնարավոր կլիներ տեղեկանալ մատուցված ծառայության վարձավճարի մասին: Բացի այդ, նախկին կառավարիչ հանգուցյալ Բ.Հակոբյանի կողմից իրականացվել է պարտապանի գույքի վաճառք և ստացված դրամական միջոցները բաշխվել են:<<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի “ա” կետի տրամաբանությունից ելնելով գույքի գնահատման ծախսերը պետք է որ ներառված լինեին այդ բաշխման ծրագրով: Բաշխման ծրագրի բացակայության պատճառով ես չեի կարող տեղեկացված լինել գույքի գնահատման ծախսերի վճարված լինելու կամ չլինելու մասին: Կառավարիչը նշել է, որ իր կողմից իրականացված գույքի վաճառքից առաջացած դրամական միջոցները բաշխվել են դատարան ներկայացված և պարտատերերի կողմից չառարկված բաշխման ծրագրով, որի հիման վրա կազմվել է բաշխման ծրագիր՝ կից հավելվածներով, որն էլ հաստատվել է դատարանի 11.06.2018թ.-ի որոշմամբ, համաձայն որի բաշխման ծրագրի հիման վրա բավարարվել են գրավով ապահովված <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ի պահանջը 13,777,186 ՀՀ դրամի չափով:

Ըստ կառավարչի կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում, պարտապանին պատկանող այլ գույք չի հայտնաբերվել և կատարված գործողությունների և հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ պարտապանին սեփականության իրավունքով պատկանող այլ գույք չի հայտնաբերվել: Ինչ վերաբերվում է <<ԱՆԻԿՕՍ>> ՍՊԸ-ի տնօրեն Ա.Լ.Ստեփանյանի կողմից արժարժված հանգամանքներին, կառավարիչը նշել է, որ գույքերի շուկայական արժեքների վերաբերյալ 16.07.2015 թ. պատվիրատուին հանձնված թիվ ԲՀ15/01/01 և թիվ ԲՀ15/01/02 գնահատման հաշվետվություններին՝ որոնց հիմքով հայտարարվել է աճուրդ և իրենց տեղեկությունների համաձայն գույքերն օտարվել են, սակայն մինչ օրս ծառայությունների մատուցման ծախսի վճարում չի իրականացվել հարցին նշել է, որ շուրջ 13 տարի անց պահանջ է ներկայացվում, այն դեպքում, երբ նման պահանջի մասին ես հիմա եմ իրազեկվում, մինչդեռ գործող կարգի համաձայն տնտեսվարող ընկերությունները պարտավոր են յուրաքանչյուր տարեվերջում գույքագրեն ընկերությունների հաշվեկշռային դեբետային և կրեդիտային մնացորդները՝ այն արտացոլելով փոխադարձ ստուգման ակտերով: Կառավարիչը ավելացրել է նաև, որ մինչ օրս <<ԱՆԻԿՕՍ>> ՍՊԸ-ի կողմից իրեն որևէ դիմում չի ներկայացվել,

/բացառությամբ 12.02.2025թ. գրության/ գույքի գնահատման /ծառայության մատուցման/ վճարի վերաբերյալ որևէ ակնարկ չի եղել, որի պայմաններում ես չեի կարող տեղեկացված լինել գույքի գնահատման ծախսերի վճարված լինելու կամ չլինելու մասին: Ելնելով իր կողմից նշվածից, իր դիրքորոշմամբ գտել է, որ „ԱՆԻԿՕՍ“, ՍՊԸ-ի տնօրեն Ա.Լ.Ստեփանյանի կողմից ներկայացված գրությունը միանգամայն անհիմն է և ենթակա է մերժման:

Անդրադառնալով նիստի ընթացքում, կատարված բանավոր հայտարարություններին Ա.Ստեփանյանը իր բանավոր հայտարարությամբ նշեց, որ փորձաքննություն իրականացնելու նպատակով, նախկին սնանկության գործով Բելլա Հակոբյանի միջև կնքվել է գնահատման իրականացնելու նպատակով պայմանագիր, գնահատման աշխատանքների իրականացնելու նպատակով գնահատողին է տրամադրվել գույքագրման ակտը և գնահատման ենթակա գույքերը, ինչպես նաև այդ գույքերին վերաբերվող փաստաթղթերը: Դիմումատուն հայտնեց, որ գնահատվել են ինչպես անշարժ գույք, այնպես էլ թվով ութ տրանսպորտային միջոցներ, որոնց վերաբերյալ տրվել են առանձին թվով երկու գնահատման հաշվետվություններ և ըստ իր ունեցած տվյալների, անցած տարի նոր ունեցել են տեղեկություններ հարցուփորձի միջոցով, որ վաճառվել է նաև անշարժ գույքը և կապնվել են կառավարիչի հետ և տեսնելով, որ կառավարիչը համապատասխան գործողություններ չի կատարում, ուստի արդեն իսկ օրենքով համապատասխան քայլեր ձեռնարկեցին, քանի որ ընկերությունը գնահատման աշխատանքներ իրականացնելու համար, ունի ներգրավված աշխատողներ, որոնցը նշված գնահատման համար պետք է իրականացնի բնականաբար համապատասխան վարձատրություն: Ա.Ստեփանյանը հայտնեց, որ ծառայության ընդհանուր արժեքը կազմել է 350000 ՀՀ դրամ:

Այնուհետև Ա.Ստեփանյանին իր հարցը ուղղեց հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանը, որը հետքաքրքրվեց թե արդյոք առկա է ծառայությունների մատուցման պայմանագիր եղել է թե ոչ: Նշված հարցին Ա.Ստեփանյանը պատասխանեց, որ բոլ կառավարիչների հետ, ում հետ եղել է աշխատանքային գործընթաց, կնքվել է մեկ հիմնական պայմանագիր իսկ այնուհետև ըստ պատվերների եղել է համապատասխան գրագրություններ:

Ա.Սարգսյանը հետաքրքրվեց թե երբ է կապնվել կառավարիչի հետ, որին ի պատասխան Ա.Ստեփանյանը հայտնեց, որ նրա հետ կապ է հաստատել 2024թ.-ի աշնանը:

Այնուհետև Ա.Ստեփանյանին իր հարցը ուղղեց հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Սարգսյանը, որը հետաքրքրվեց թե կատարված աշխատանքների և ծառայության մատուցման հարկային հաշիվ դուրդ գրվել է թե ոչ, որին ի պատասխան Ա.Ստեփանյանը պատասխանեց, որ բնականաբար նման հարկային հաշիվ դուրդ գրվել է սակայն կարող է ներկայացնել միայն այդ հարկային հաշվի ելեկտրոնային դուրա գրված հարկային հաշիվը, քանի որ ծառայությունը մատուցվել է 2015թ.-ին և բնականաբար հաշվապահական փաստաթղթերը արխիվացվել են:

Այնուհետև Ա.Ստեփանյանին իր հարցը ուղղեց հանձնաժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը, որը հետաքրքրվեց թե արդյոք հաշվապահորեն որպես դեբիտորական պարտավորություն այս պահանջը ընկերությունում գրանցվել է թե ոչ, որին ի պատասխան Ա.Ստեփանյանը հայտնեց, որ ընկերությունում հաշվապահական ձևակերպումներ են ստացել իրենց կողմից կատարված բոլոր գնահատման աշխատանքները և բնական է, որ նշված ծախսը նույնպես պետք է ձևակերպված լինի:

Այնուհետև, որպես հարց և որպես միջանկյալ կարծիք հայտնեց հանձնաժողովի անդամ Արմենակ Աղամյանը հայտնեց, որ անկախ ցանկացած հանգամանքներից գոյություն ունի աշխատանքային պրակտիկա և եթե կառավարիչը աշխատում է մասնագետների հետ,

գոյություն ունի փոխադարձ վստահության մտնողորտ և կա երկու խնդիր, այն է՝ կատարվել է արդյոք փաստացի աշխատանք՝ գնահատում թե ոչ, եթե հերքվում է, որ փաստացի աշխատանք է կատարվել, ապա դա հարցի մեկ այլ կողմն է, իսկ եթե կատարվել է ապա տեխնիկական հարցին անդրադառնալը ավելորդ է և էական հանգամանքը նրանումն է, որ արդյոք արվել է աշխատանքը թե ոչ, իսկ եթե արվել է ապա ինչու կատարված աշխատանքի դիմաց չի վճարվել: Նշված հանգամանքի վերաբերյալ, Ա.Սարգսյանը հայտարարեց նիստի բոլոր մասնակիցներին, որ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության, առաջին աստիճանի դատարանի 27.01.2015թ.-ի թիվ ԿԴ/0016/04/13 որոշմամբ, հաստատված հանգամանք է համարվել այն փաստը, որ գույքերը փաստացի գնահատվել են „Անիկոմ“, ՍՊԸ-ի կողմից:

Այնուհետև ձայնը տրվեց սնանկության գործով կառավարիչ՝ Ջիվանշիր Աֆյանին, որը հայտնեց, որ երբեվիցե Ա.Ստեփանյանի մտքով չի անցել, որ կա վաղեմության ժամկետ և պահպանելով կարգը, գրավոր դիմի կառավարիչին, այն դեպքում, որ իր մոտ հիմքեր լինեն, ինքը կվճարեր այդ գումարը: Հանրկ է նշել, որ իր հարցի տեսքով հայտարարությամբ, Ջիվանշիր Աֆյանը հարցրեց թե արդյոք „Անիկոմ“, ՍՊԸ-ն իրականացրել է իր հաշվապահությունում գույքագրում և կազմել փոխադարձ ակտ, որից հետո էլ այդ գումարը նրանով հաշվապահական փաստաթղթերում և պահել հարկեր, որին ի պատասխան հանձնաժողովի նախագահ Ա.սարգսյանը հայտնեց, որ ինչպես հանձնաժողովը, այնպես էլ կառավարիչը իրավունք չունեն հետաքրքրվելու այլ կազմակերպության հաշվապահական փաստաթղթերի շրջանառությունից, կատարված հաշվապահական ձևակերպումներից և պահված հարկերի մասին, քանի որ դա այդ կազմակերպության ներքին գախտնիության պահպանման խնդիր է:

Կառավարիչը հավելց նաև, որ նախկին կառավարիչի մահվանից հետո, նրա թոռը իրեն է ներկայացրել շատ քիչ փաստաթղթեր որում առկա չէր գնահատման վերաբերյալ պայմանագրերը և ընդունման հանձնման ակտերը: Եթե նա իմանար որ կա փաստաթուղթ, ապա անմիջապես կվճարեր այդ գումարը, հիմք ընդունելով հիմնավորող փաստաթղթերը: Հայտնեց, որ դատարանում նույնպես հիմնավորող ապացույցներ չկան, չկան նաև նախորդ բաշխման ծրագրերը: Նա հստակ մատնանշեց նաև, որ անկախ ժամկետներից, եթե լինեին համապատասխան փաստաթղթեր, ապա նա կվճարեր նշված գումարը: Կառավարիչը հայտարարեց նաև, որ դիմել է բանկին և ստացել հաշվարկային հաշվի քաղվածքը, համաձայն որի, ըստ իրեն Բելայի թոռը 300000 ՀՀ դրամ գումար է ստացել լիազորագրով և ըստ կառավարիչի, „Անիկոմ“, ՍՊԸ-ին պետք է վճարվեր այդ գումարից: Այնուհետև նշեց նաև, որ 2018թ.-ի հունվար ամսին բաշխման ծրագիր է ներկայացրել դատարանին, որը բողոքարկվել է ՀՏ-ի կողմից, իսկ այնուհետև հաստատվել դատարանի որոշմամբ: Այնուհետև կառավարիչը հայտնեց, որ կապ է ունեցել նաև կառավարիչ Խաչիկ Նազարյանի հետ, որը հայտնել է, որ վերջինս որևիցե մի գործողություն չի կատարել և տեղյակ չէ նման հարցերից: Իսկ այնուհետև կառավարիչը սկսեց բարձրաձայն ընթերցել իր դիրքորոշումը ամբողջությամբ: Իսկ այնուհետև կառավարիչը նշեց, որ „Անիկոմ“, ՍՊԸ-ն եթե ներկայացներ պահանջ, ապա նա կներառեր այդ պահանջը և այդ պահանջը կներկայացներ դատարան, իսկ այնուհետև կբաշխեր այդ գումարը: Կառավարիչը նշեց նաև, որ հաշվարկային հաշվից դուրսեն գրվել տարբեր գումարներ, սակայն թե այդ գումարները որտեղ են ծախսվել, իր մոտ հիմքեր առկա չեն: Կառավարիչը հայտարարեց, որ ՀՀ Քաղ.օրի համաձայն սահմանվում է նախորդ 3 տարվա ժամկետը, ինչպես նաև նշելով ինչվոր մի Կարգապահական հանձնաժողովի կարգի 4,12 հոդված, որով կարգապահական հարուցումը պետք է կարճվի ժամկետները լրանալու պատճառով:

Նիստի ընթացքում, Ա.Սարգսյանը առաջարկեց հարցեր ուղղել կառավարիչին և հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը հարցրեց թե աճուրդները դուք եք անցկացրել թե ոչ, որին ի պատասխան կառավարիչը հայտնեց, որ մեքենաները իր կողմից չեն վաճառվել, իսկ տունը վաճառվել է իր կողմից:

Այնուհետև կառավարիչին իր հարցը ուղղեց Արմինե Մովսիսյանը, որը հետաքրքրվեց, թե այն դեպքում, երբ նա վաճառեց աճուրդում դրված սեփական տունը, հարց չառաջացավ թե այդ տունը ով էր գնահատել, որին ի պատասխան կառավարիչը հայտնեց, որ հարց չառաջացավ, քանի որ իրեն հայտնի էր, որ այդ գնահատումը կատարել է „Անիկոմ,, ՍՊԸ-ն, այսինքն նման պայմաններում, կառավարիչը ևս մեկ անգամ ստել է թե իր հայտարարություններում և թե իր դիմումում, որ տեղյակ չի եղել, որ „Անիկոմ,, ՍՊԸ-ն է գնահատել: Այնուհետև Ա.Մովսիսյանը հարցրեց, թե եթե Ձեզ հայտնի էր դրա մասին, որ „Անիկոմ,, ՍՊԸ-ն է կատարել գնահատումը, ինչու Դուք Ձեր բաշխման ծրագրում չառանձնացրեցիք և չներառեցիք այդ գնահատման ծախսը և գույքի իրացման ժամանակ, նախ կառավարիչը հաշվառում է իր ծախսերը և նշված ծախսերը հաշվարկելիս, Ձեզ մոտ չառաջացավ այն տրամաբանությունը, որ „Անիկոմ,, ՍՊԸ-ն գնահատելա ոչ միայն ավտոմեքենաները, այլ իր կողմից հենց իրացված անշարժ գույքը, որին ի պատասխան կառավարիչը նշեց, որ նման բան որևիցե մի տեղ գրված չէ:

Ա.Մովսիսյանը հետաքրքրվեց, թե՝ գույքի իրացման և իրացումից ստացված գումարների բաշխման ժամանակ, ինչու չներառեցիք այդ վարչական ծախսերը, որին ի պատասխան կառավարիչը հայտնեց, որ „Անիկոմ,, ՍՊԸ-ն պահանջ չեր ներկայացրել, ավելացնելով թե իբրեւ չի իմացել, որ այդպիսի ծառայություն մատուցվել է /այսինքն իարարամերժ պատասխան/:

Հանձնաժողովի անդամ Արմեն Ադամյանը հայտնեց, որ արդյոք կառավարիչը կասկածում է, որ „Անիկոմ,, ՍՊԸ-ն չի կատարել այդ աշպատանքը և չի ստացել այդ գումարը և ներկայումս „Անիկոմ,, ՍՊԸ-ն կրկին անգամ է այդ գումարը պահանջում նրանից և արդյոք վերջինս կասկածում է որ այդ գումարը պետք է վճարվեր, քանի որ գույքը գնահատվել է այն վաճառվել է, առաջացել է գումար և այդ գումարից պետք է կատարվեր վճարում գնահատողին, որին ի պատասխան կառավարիչը հայտնեց թե նա չունի հիմքեր:

Այնուհետև իր հարցը ուղղեց հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Սարգսյանը որը հետաքրքրվեց թե նա տեղյակ չի եղել թե գումարը վճարվել է թե ոչ և իր բաշխման ծրագիրը ներկայացնելուց առաջ, ներկայացված է եղել Տիկին Բելլայի բաշխման ծրագիրը, կառավարիչի կողմից հաշվարկային հաշվից դուրս է բերվել քաղվածքը որտեղ առկա չեն եղել այնպիսի հիմքեր, որ գումարները փոխանցվել են „Անիկոմ,, ՍՊԸ-ին և կառավարիչի մոտ կասկած չի եղել, որ այդ գումարները ըստ էության իրականում չի փոխանցվել „Անիկոմ,, ՍՊԸ-ին: Որին ի պատասխան կառավարիչը հայտնեց որ քանի որ իրեն փաստաթղթեր չեն հանձնվել ուստի նա տեղյակ չի եղել ոչմի բանից և չի իմացել վճարված է եղել թե ոչ:

Այնուհետև իր հարցը կառավարիչին ուղղեց հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանը, որը կառավարիչից հետաքրքրվեց, թե իր կողմից նշվել է, որ սույն գործով պետք է կիրառել վաղեմության, նախ նշելով հայցային վաղեմության հարցը և հետո „Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27,2 հոդվածով նախատեսված վախճմության հարցը, արդյոք դատական ակտով հաստատված հանգամանքը կարող է մտնել հայցային վաղեմության տակ թե ոչ, որին ի պատասխան կառավարիչը հայտնեց, որ այդ նշված հանգամանքը մտնում է հայցային վաղեմության տակ:

Ա.Սարգսյանը հետաքրքրվեց նաև, որ իր հայտարարություններում կառավարիչը նշում է թե գնահատողը պահանջ իրեն չի ներկայացրել, նման պայմաններում նման հայտարարություն տալու դեպքում, գործող օրենքի որ հոդվածին է հիմնվում կառավարիչը, որ գնահատողը պետք է ներկայացնեք սնանկության վարույթին պահանջ, մասնավորապես „Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով է սահմանվում պահանջների ներկայացումը սնանկության վարույթի ընթացքում, արդյոք այդ պահանջ ներկայացնելը մտնում է այդ հոդվածի տակ, որ կառավարիչին իսկ ծառայություն մատուցած անձը, կառավարիչին իսկ պետք է ներկայացնի պահանջ, կամ հիշեցնի նրան վճարելու մասին, որը ի դեպ նշված է թե իր դիրքորոշման մեջ և թե իր հայտարարություններում, որին ի պատասխան կառավարիչը պատասխանեց, որ Ա.Սարգսյանի կողմից տրված հարցը ոչ մի կապ չունի սույն գործի հետ:

Ա.Սարգսյանը հետաքրքրվեց նաև, թե ծանոթ լինելով դատարանի որոշման, որով հիմնավորվել է, որ գույքերը գնահատվել են „Անիկոմ,, ՍՊԸ-ի կողմից և ինչպես Դուք եք նշել, հաշվարկային հաշվում չունենալով հիմք որ այդ հաշվից փոխանցում չի կատարվել, արդյոք որպես կառավարիչ, թեկուզ զանգով չեք հետաքրքրվել թե գումարները վճարված են թե ոչ:Որին ի պատասխան կառավարիչը հայտնեց, որ այդ հարցին չի ուզում պատասխանի:

Այնուհետև կրկին անգամ հարց տվեց Արմինե Մովսիսյանը, որը հետաքրքրվեց, թե արդյոք կառավարիչը ունի հիմք, որ սնանկության հատուկ հաշվից կա փոխանցումներ „Անիկոմ,, ՍՊԸ-ին թե ոչ, որին ի պատասխան հայտնեց, որ նման հիմքեր չունի:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այլ հայտարարություններ, դիմումներ և հարցեր չեն հնչեցվել, ուստի Ա.Սարգսյանը հանձնաժողովի անդամներից հետաքրքրվեց, թե արդյո՞ք կարող են լսումները համարվել ավարտված, թե ո՞չ, և ստանալով դրական կարծիք, Ջիվանշիր Աֆյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում կարգապահական վարույթ հարուցելու համար նշանակված նիստը համարվեց փակված:

Այնուհետև կարգապահական հանձնաժողովի անդամները հայտնեցին իրենց կարծիքները, մասնավորապես՝

-Հարություն Գևորգյանը հայտնեց կարծիք, որով նշեց, որ քննարկման արդյունքում հայտնի դարձավ, որ Ջիվանշիր Աֆյանի կողմից կատարվել են կարգապահական խախտումներ, այն է՝ վերջինս չի ընդունում, որ կատարվել է փաստացի աշխատանք և աշխատանքի հեկանքով կա կազմված գնահատման եզրակացություն և այդ եզրակացության հիման վրա, „Անիկոմ,, ՍՊԸ-ին պետք է կատարել կատարված աշխատանքի դիմաց վճարումներ:Նման պայմաններում Հ.Գևորգյանը գտնում է, որ վարքագծի կանոնների խախտման հիման վրա, կառավարիչ Ջիվանշիր Աֆյանի նկատմամբ կիսառել տուժ՝ նկատողություն:

-Արմենակ Ադամյանը հայտնեց կարծիք, որով նշեց, որ կողմնակից է իր գործընկերոջ հետ և նման դեպքերի ներքո պետք է պատժվի խախտում կատարած անձը, այլ անձանց կողմից նման հանգամանքների չկրկնվելու նպատակով:Նախ նման պայմաններում խոսում է մարդկային պոնկտուալ աշխատանքային մոտեցումը, բացի այդ բառախաղերով հարցին մոտենալը, հարցի իմաստը փոխելը, ստելը բերում է նրան, որ մենք պետք է կառավարիչի նկատմամբ կիսառելք ամենաբարձր տույժը, նկատողությունը որպեսզի դա դաս լինի բոլորին:

-Արինե Մովսիսյանը հայտնեց կարծիք, որով նշեց, որ քնարկման արդյունքում պարզվեց, որ կառավարիչի կողմից կա բացարձակ կանոնների խախտում, սնանկության վարույթի ընթացքում կատարվել է գնահատում և նշվածի վերաբերյալ նա պետք է տեղեկացված լիներ, քանի որ նա է վարում նշված սնանկության գործի կառավարիչի պարտականությունները և պարտավոր էր տեղյակ լինելու վարչական ծախսերը վճարվել են թե ոչ և այն մոտեցումները թե եղել է հին կառավարիչ կամ նոր կառավարիչ դա բառախաղեր են, որը կառավարիչը փորձեց մեզ ներկայացնել: Ես նույնպես հակված եմ իմ կոլեգաների այն կարծիքին, որ Ջիվանշիր Աֆյանին պետք է տալ տույժ ամենաբարձր կարգով, այն է՝ նկատողություն:

Լուսինե Սարգսյանը հայտնեց կարծիք առ այն, որ սնանկության գործով կառավարիչը թույլ է տվել կառավարիչի վարքագծի խախտում, քանի որ կառավարիչը պարտավոր էր վարչական ծախսերի մեջ ներառել առանց խտրականության բոլոր վարչական ծախսերը, այն է՝ ոչ միայն իր կողմից կատարված վարչական ծախսերը այլ նաև նախորդ կառավարիչի կողմից կատարված վարչական ծախսերը, առավել ևս, որ վերջին գույքի մասով աճուրդը կազմակերպել է հենց ինքը՝ Ջիվանշիր Աֆյանը և նման պայմաններում որպես կառավարիչ հստակ տեղեկացած էր, որ կար գույքի գնահատման ծախսեր: Իսկ ինչ վերաբերվում է վերջինիս այն փաստարկին թե տեղյակ չի եղել թե գումարը փոխանցվել է թե չի փոխանցվել, կառավարիչը ուներ հնարավորություն ստանալու նման տեղեկատվություն հենց գնահատողից, առավել ևս, որ քննության ընթացքում պարզվել է, որ վերջիններս ճանաչում էին միմիանց և առաջին անգամ չէ որ կառավարիչի համար „Անիկոմ,, ՍՊԸ-ն առաջին անգամ էր գնահատում իրականացում: Տեսնելով, որ գնահատողի գումարը վճարելու փաստեր առկա չէ, պետք է հետաքրքրվեր գնահատողից ծառայության վճարման վերաբերյալ: Անդրադառնամ նաև այն հանգամանքին, որ կառավարիչը մի քանի անգամ շեշտեց, որ անցել են հայցային վաղեմության ժամկետները և վարույթը պետք է կարճել, գտնում եմ, որ կոնկրետ դեպքում քննարկվում է ոչ թե պայմանագրային հարաբերությունները, այլ կառավարիչի վարքագծի կանոնների խախտումը, իսկ կոնկրետ դեպքում նման խախտում առկա է, քանի որ վերջինս պետք է ներառեր գնահատման ծախսը վարչական ծախսերի մեջ և դեռ ավելին՝ քանի որ առկա էր արդեն դատական ակտ որով հաստատված էր գնահատողի փաստացի կատարված աշխատանքը, պետք է այդ վարչական ծախսը պարզեր և, ներառեր իր բաշխման ծրագրում և այդ իսկ պատճառով գտնում եմ, որ պետք է տալ կարգապահական տույժ նկատողության տեսքով:

Արման Սարգսյանը հայտնեց կարծիք առ այն, որ նույնպես միանում է իր կոլեգաների կողմից արած հայտարարություններին և կարծիքներին և այդ կարծիքներին ավելացրեց այն փաստը, որ բոլոր կառավարիչները շփվում են նման կազմակերպությունների հետ, որոնց հետ աշխատելով կառավարիչները իրականացնում են սնանկության ծավալում ընդգրկված գույքի գնահատումներ, չափագրումներ և այլ նմանատիպ աշխատանքներ, որոնք ըստ էության օգտակար են լինում սնանկության կառավարիչին և սնանկության վարույթին: Բացի այդ Ա.Սարգսյանը հայտնեց, որ կառավարիչը վարույթի ընթացքում իրացրել է գույք և իրացման հետևանքով փաստացի տեղյակ է եղել, որ գնահատումը իրականացվել է „Անիկոմ,, ՍՊԸ-ի

կողմից, քանի որ հրապարակային սակարկությունների միջոցով իրացումը իրականացվել է դատարանի որոշման հիման վրա, որում հստակ նշվել է, որ այդ իրացված գույքի գնահատումը նույնպես իրականացրել է „Անիկոմ,, ՍՊԸ-ն: Բացի այդ, գործի քննության ընթացքում կառավարիչը մի քանի անգամ փոխեց իր հայտարարություններ մեկ ասելով թե ինքը չի իմացել թե „Անիկոմ,, ՍՊԸ-ն է կատարել գնահատումը թե ոչ /նշել է նաև իր դիրքորոշման մեջ/, հետագայում փոխելով իր խոսքը թե ծանոթ է որոշմանը և իմացել է, որ „Անիկոմ,, ՍՊԸ-ն է կատարել գնահատման աշխատանքները: Քննության ընթացքում հայտնի դարձավ, որ չնայած նրան, որ ինչպես ինքը նշում է, որ իրեն փաստաթղթեր չեն տրամադրել, ըստ էության կառավարիչը չի ծանոթացել դատարանում առկա նյութերին, քանի որ եթե ծանոթածաց լիներ, ապա իր իսկ դիրքորոշման մեջ չեր նշի և նիստի ժամանակ չեր հայտարարի այն հանգամանքը, որ գործում գնահատման եզրակացությունները առկա չեն, որը տեղիք է տալիս կասկածելու, որ կառավարիչը թե դիրքորոշմամբ և թե նիստին եղած մի քանի հայտարարություններով միգուցե ստում է: Բացի այդ էլ, եթե չի ծանոթացել նույնիսկ սնանկության գործին, ապա դատարանի 27.01.2015թ.-ի թիվ ԿԴ/0016/04/13 որոշմամբ, հաստատված հանգամանք է համարվել այն փաստը, որ գույքերը փաստացի գնահատվել են „Անիկոմ,, ՍՊԸ-ի կողմից: Ինչպես կառավարիչը նշեց ծանոթացել է սնանկության հատուկ հաշվի քաղվածքին, որով „Անիկոմ,, ՍՊԸ-ին փոխանցում կատարված չեր և վերջինիս մետ պետք է առաջանար կանխորոշում, թե արդյոք այդ գումարը վճարվել է թե ոչ և պարզեր թե իրականում արդյոք վարչական ծախսը, որը ըստ էության առաջացել է հենց սնանկության վարույթի ընթացքում վճարվել է թե ոչ:

Ելնելով վերը նշվածից Ա.Սարգսյանը նշեց, որ նույնպես համամիտ է հանձնաժողովի անդամների հետ և գտնում է, որ Ջիվանշիր Աֆյանի նկատմամբ պետք է կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

Չնայած նրան, որ կարգապահական հանձնաժողովի բոլոր անդամները, հայտնել էին կարծիք՝ Ջիվանշիր Աֆյանի նկատմամբ որպես կարգապահական տույժ՝ նկատողություն կիրառելու հանգամանքը, սակայն հանձնաժողովի նախագահը քվեարկության դրեց նշված՝ Ջիվանշիր Աֆյանի նկատմամբ կարգապահական տույժը որպես նկատողություն հայտարարելու վերաբերյալ հարցը, որին միաձայն քվեարկվեց կողմ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախ հարկ է նշել, որ կարգապահական հանձնաժողովը պետք է ուսումնասիրի միայն ու միմիայն դիմումում նշված հանգամանքները, պարզի այդ դիմումում ընկած հանգամանքների հիմնավորվածությունը, ինչպես փաստաթղթային, այնպես էլ օրենսդրական և առկա իրավական ակտերի շրջանակներում:

Կոնկրետ դեպքում հանձնաժողովը չեր կարող և չի անդրադարձել դիմումում նշված այն հանգամանքին, որ գործադիր մարմնի ղեկավարը հետևողականություն ցուցաբերի նշված հարցի վերաբերյալ եւ սնանկության գործով կառավարչի նկատմամբ կիրառել համապատասխան օրենքով սահմանված միջոցառումներ, փորձաքննության ծախսի գումարի վճարումն փորձագիտական հաստատությանը ապահովելու համար: Չի կարող

անդարադառնալ և ազդել կառավարիչի վրա, որպեսզի կառավարիչի կողմից փորձաքննության ծախսի վճարները փորձագիտական ընկերությանը հատուցվի:

Ներկայացված դիմումում նշված հարցերից հանձանժողովի կողմից քննարկման ենթակա են միայն այն հանգամանքները, որոնք սահմանված են „Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.2 հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, այն է՝ կառավարչի նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառման հիմքերն են՝ կառավարիչների մասնագիտական վարքագծի կանոնները խախտելը: Սակայն հարկ է նշել, որ կառավարչի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ կարգապահական վարույթը կարճելու հիմք կարող է հանդիսանալ նաև, „ՍԳԿԿ,, ԻԿԿ-ի 20.05.2023թ.-ին ընդհանուր ժողովի կողմից թիվ 1 որոշմամբ հաստատված սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագիրքը, որի 1 գլխով սահմանվում են կառավարչի կողմից սնանկության վարույթի ընթացքում իրականացվող պարտականությունները:

Այսինքն՝ նման պայմաններում սույն դիմումը քննարկելիս անհրաժեշտ է պարզել միայն, թե արդյոք կառավարիչի կողմից իր գործունեությունն իրականացնելիս օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտում տեղի ունեցել է թե ոչ:

Ըստ դիմումատուի կողմից ներկայացված դիմումի և առարկության, հրավիրված նիստի ընթացքում ներկայացված բացատրությունների, հայտարարությունների, հարցերի և հարցերի պատասխանների պարզվեց,

Այսպիսով՝ սույն կարգապահական վարույթի ընթացքում, հաստատված է համարվում այն հանգամանքը, որ գույքերի գնահատման աշխատանքները իրականացվել է „Անիկոմ,, ՍՊԸ-ի կողմից: Նշված հանգամանքը հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության, առաջին աստիճանի դատարանի 27.01.2015թ.-ի թիվ ԿԴ/0016/04/13 որոշմամբ: Հաստատվել է նաև այն հանգամանքը, որ կատարված աշխատանքների դիմաց վճարում չի իրականացվել, քանի որ հենց կառավարիչի կողմից սնանկության հատուկ հաշվից դուրս բերված քաղվածքով, „Անիկոմ,, ՍՊԸ-ին փոխանցում կատարված չէ, այլ կատարվել են հաշվից տարբեր գումարների կանխիկացումներ:

Չնայած այն հանգամանքին, որ կառավարիչը իր դիրքորոշման մեջ և բանավոր հայտարարությունում նախ նշում է, որ տեղյակ չի եղել որ գնահատումը իրականացրել է դիմումատուն, իսկ այնուհետև փոխելով բանավոր հայտարարությունը թե իրականում տեղեկացված է եղել, պետք է նշել, որ կառավարիչը չէր կարող չիմանալ, որ գույքերի գնահատումը իրականացվել է դիմումատուի կողմից, քանի որ աճուրդում դրված՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ.Զորադրյուր, Ազատության փողոցի թիվ 136 հասցեի տակ գտնվող տունը իրացվել է իր կողմից ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության, առաջին աստիճանի դատարանի 27.01.2015թ.-ի թիվ ԿԴ/0016/04/13 որոշման հիման վրա:

Կարգապահական վարույթի քննարկման ընթացքում բազմաթիվ էին կառավարիչի տարբեր իրարամերժ պնդումները և հայտարարությունները, որով կարելի է եզրակացնել, որ կառավարիչը թե իր հայտարարություններով և թե դիրքորոշման մեջ միգուցե ստում է, մասնավորապես՝

Նախ կառավարիչը ինչպես իր դիրքորոշմամբ, այնպես էլ կատարված հայտարարությամբ նշել է, որ գրավոր դիմել եմ դատավոր Ա.Բաբայանին խնդրելով թույլատրել

ուսումնասիրելու և պատճենահանելու թիվ ԿԴ/0016/04/13 սնանկության վարույթի նյութերը, սկայն հետազայում հարց ու պատասխանի ժամանակ խոստովանեց, որ նոր է նախապատրաստվում նման դիմում ներկայացնելու դատարան:

Բացի այդ կառավարիչը թե իր դիրքորոշմամբ և թե կատարված բանավոր հայտարարությամբ նշել է, որ հերիք չէ կառավարիչը չի ուսումնասիրել սնանկության գործը, այլև իբրև պարզել է, որ „Անիկոմ“, ՍՊԸ-ի թվով երկու գնահատման հաշվետվությունները սնանկության գործում առկա չեն:

Իր դիրքորոշմամբ կառավարիչը հայտնում է նաև, որ իբրև թե գործում առկա չէ ընկերության գույքի գնահատման ակտը, սնանկության գործով կառավարչի և գնահատող ընկերության միջև կնքված վճարովի ծառայության մատուցման պայմանագիրը, ինչպես նաև իրականացված ծառայության ընդունման-հանձնման ակտը, որի պայմաններում հնարավոր կլինեք տեղեկանալ մատուցված ծառայության վարձավճարի մասին: Նշված հանգամանքը նույնպես կարելի է եզրակացնել, որ կառավարիչը ճիշտ տվյալներ չի ներկայացնում կարգապահական հանձնաժողովին, քանի որ եթե վերջինս ընդունում է, որ նոր է ուզում ծանոթանալ գործի նյութերին, ապա նա չէր էլ կարող իմանալ արդյոք սնանկության գործում նման փաստաթղթեր առկա են թե ոչ:

Իր իսկ դիրքորոշման մեջ կառավարիչը նշում է, որ Բ.Հակոբյանի կողմից իրականացվել է պարտապանի գույքի վաճառք և ստացված դրամական միջոցները բաշխվել են և <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի „ա“ կետի տրամաբանությունից ելնելով, գույքի գնահատման ծախսերը պետք է որ ներառված լինեին այդ բաշխման ծրագրով և իբրև թե սնանկության վարույթում բաշխման ծրագրի բացակայության պատճառով կառավարիչը չէր կարող տեղեկացված լինել գույքի գնահատման ծախսերի վճարված լինելու կամ չլինելու մասին: Նման պայմաններում նույնպես երևան է գալիս այն փաստական հանգամանքը, որ կառավարիչը չի ծանոթացել նյութերին, քանի որ եթե բանավոր քննարկման ժամանակ պարզվել է, որ նոր պետք է ծանոթանա գործի նյութերին, ապա ինչպես կարող է հստակ նշել, թե արդյոք բաշխման ծրագիր գործում առկա է թե ոչ, իսկ եթե մի պահ ընդունենք, որ բաշխման ծրագիր առկա չէ, ապա ավելին է կայանում վերջինիս կողմից կատարված խախտումը, քանի որ նման պայմաններում կառավարիչը պետք է պարզեր եթե առկա չէ բաշխման ծրագիր, ապա որտեղ են նման պայմաններում, նախորդ աճուրդներով վաճառված գույքերի գումարները: Դեռ ավելին՝ կառավարիչը դուրս է բերել սնանկության հատուկ հաշվի քաղվածքը և այդ ըստ այդ քաղվածքի, սնանկության հատուկ հաշվից, „Անիկոմ“, ՍՊԸ-ին փոխանցում կատարված չի եղել, այլ հատուկ հաշվից կատարվել են միայն տարբեր գումարների կանխիկացումներ:

Այսինքն՝ չանդրադառնալով դեռ այն հանգամանքներին թե կառավարիչը ինչ գործողություններ է կատարել „Անիկոմ“, ՍՊԸ-ի գումարների վճարման, կամ որպես ծախս ճանաչման և այլն, արդեն իսկ կառավարչի կողմից վերը նշված փաստարկները այն մասին, որ կառավարիչը սխալ և սուտ տեղեկություններ է ներկայացրել կարգապահական հանձնաժողովին, արդեն իսկ ենթակա է պատասխանատվության ենթարկման „Սնանկության մասին“, ՀՀ օրենքի 27.2 հոդվածի 1-ին մասի, 2-րդ ենթակետով: Նշված հանգամանքը պետք է դառնա լուրջ քննարման առարկա, քանի որ ցանկացած սնանկության գործով կառավարիչ կարող է կարգապահական հանձնաժողովին ներկայացնի սխալ կամ սուտ տեղեկություն և առանց որևիցե մի մեկնաբանության, մնա անպատիժ:

Կառավարիչի իր բանավոր հայտարարությամբ պնդել է, թե եթե „Անիկոմ,, ՍՊԸ-ն ներկայացնելու պահանջ, ապա նա կներառեր այդ պահանջը և այդ պահանջը կներկայացներ դատարան գրանցման, իսկ այնուհետև կբաշխեր այդ գումարը: Նշված հանգամանքի վերաբերյալ պետք է նշել, որ գնահատող կազմակերպությունը չպետք է ներկայացնի պահանջ իր գումարը վճարելու վերաբերյալ, քանի որ պարտապանի սնանկության գործընթացի անցկացման ժամանակ, պարտապանի նկատմամբ ներկայացվող գումարային պահանջ ներկայացնելու համար, առկա է համապատասխան դրույթ, որը նախատեսված է „Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով: Սակայն նշված դրույթի մեջ, գնահատողի կողմից կատարված ծառայությունների դիմաց ենթակա վճարումը, որպես պահանջ չի կարող համարվել, քանի որ նշված գումարը համարվում է որպես վարչական ծախս, որը ենթակա է հաշվարկման կառավարիչի կողմից: Կոնկրետ դեպքում եթե առկա չէր հիմնավորում գնահատողին փաստացի վճարման հանգամանքը, ապա կառավարիչը պետք է ձեռնարկեր քայլեր՝ միջոցներ պարզելու գնահատողին փաստացի կատարված աշխատանքի դիմաց կատարվելիք վճարման հանգամանքը:

Այսպիսով՝ վերը նշված հանգամանքների օրենքից բխող հանգամանքներն են՝ Մինչև 12.12.2019թ. ՀՕ-294 օրենքի փոփոխությունները գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «դ-զ» կետերի համաձայն՝ **1. Սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը՝ (...)**

դ) իր լիազորությունների կատարումը պատշաճ ապահովելու նպատակով ներգրավում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններ կամ մասնագետների և (...) նրանց վարձատրում է պարտապանի հաշվին, այսինքն՝ նման պայմաններում ակնհայտ է այն հանգամանքը, որ նշված վարչական ծախսը պետք է հաշվարկեր անձամբ կառավարիչը, այլ ոչ թե այդ պահանջը ներկայացնելու գնահատողը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **3. Սույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս կառավարիչը գործում է պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ: Նման պայմաններում, կառավարիչը ստանձնելով նախորդ կառավարիչից սնանկության գործը, ըստ էության ստանձնում է այդ սնանկության գործը իր ողջ ծավալով, այլ ոչ թե միայն այն մասից, երբ վերջինս նշանակվել է կառավարիչ:**

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **1. Պարտատերերի չապահովված պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝ ա) կառավարչի (ժամանակավոր կառավարչի) վարձատրությունը և վարչական ծախսերը, (...):**

Վերը նշվածից արձանագրում ենք, որ սնանկության կառավարիչն օրենքով իրեն վերապահված լիազորությունների կատարման շրջանակներում իրացնում է դրանք պարտապանի անունից:

Պարտապանի սնանկ ճանաչվելու փաստն ինքնին ենթադրում է, որ վերջինս չի կարողացել կատարել իր ֆինանսական պարտավորությունները, այդ իսկ պատճառով սնանկ ճանաչվելուց հետո դատարանի կողմից նշանակվում է սնանկության գործով կառավարիչ, որի

լիազորություններն էլ հանգում են պարտապանի սնանկության գործընթացում իր իսկ կողմից, կամ նախկին կառավարիչի կողմից կատարված՝ ծառայությունների մատուցումից ստացված ծախսերի ապահովմանը: Հենց դա է պարզապես, որ օրենսդիրը սնանկության գործով կառավարչին է վերապահել սնանկության վարույթով լուծում պահանջող հարցերով պարտապանի անունից գործելու իրավասությունը:

Միաժամանակ, պետք է նշել, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասից բխում է, որ **սնանկության կառավարիչն անձնական պատասխանատվություն է կրում իր լիազորություններն իրականացնելիս կատարած գործողությունների և դրսևորած անգործության համար՝ ինստիտուցիոնալ առումով կրելով նաև ձեռնարկատիրական ռիսկ**, այլ կերպ ասած՝ սնանկության վարույթում սնանկության կառավարչի իրավական կարգավիճակ ստանձնելու փաստի ուժով սնանկության կառավարիչն իր գույքով պատասխանատու է սնանկության վարույթի, ինչպես նաև սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի ու իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած ու սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերի շրջանակներում դրսևորած վարքագծի (գործողության և անգործության) համար. **այդպիսի պատասխանատվությունը չի դադարում նույնիսկ սնանկության վարույթում սնանկության կառավարչի լիազորությունները դադարելուց հետո** (տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 07.05.2024թ. թիվ ԱՎԴ/0791/02/13 որոշումը):

Քննարկվող դեպքի տվյալները վերը նշված իրավական դիրքորոշումների հետ համադրելով արձանագրում ենք, որ նշանակվելով որպես սնանկության գործով նոր կառավարիչ, վերջինս ստանձնել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով կառավարչին վերապահված բոլոր իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ սնանկության վարույթի շրջանակներում կնքված գործարքներով:

Ընդ որում, կառավարիչ նշանակվելու պահից սկսած վերջինս՝ որպես պարտապանի սնանկության գործով կառավարիչ պարտավոր էր հետևել ինչպես սնանկության վարույթի, այնպես էլ դրա շրջանակներում կնքված գործարքների (քանի որ գույքի գնահատման պայմանագիրը հանդիսանում է պարտապանի անունից կնքված գործարք՝ ներառվելով կառավարչի վարչական ծախսերի մեջ) կատարման ընթացքին, որպիսի պարագայում, նախ պետք է պարտապանին պատկանող գույքի գույքագրում, այդ թվում՝ ընթացիկ ակտիվների և պասիվների, կնքված գործարքների կատարումը՝ վերլուծելով պարտապանի ֆինանսական վիճակը և արձանագրելով վարչական ծախսերի մասով ընթացիկ չկատարված պարտավորությունների առկայությունը: Դրանից հետո միայն արդեն դատարանի որոշման հիմքով կազմակերպել պարտապանի գույքի իրացումը և դրանից ստացած միջոցների

բաշխման ժամանակ հաստատեր բոլոր վարչական ծախսերը՝ այդ թվում՝ գույքի գնահատման մասով առկա ծախսերը:

Կարգապահական հանձնաժողովը եկել է հիշյալ եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ եթե կառավարիչը ողջամիտ ժամկետում ձեռնարկեր վերը նշված գործողությունը, այն է՝ ստուգեր գույքի գնահատման գործարքի կատարման ընթացքը, ապա այդ մասով ծախսերը կներառեր պարտապանի գույքի իրացումից ստացված միջոցների հերթական բաշխման ծրագրի վարչական ծախսերի մեջ, որի արդյունքում չէր առաջանա գնահատողի հետ կնքված պայմանագրով կատարման ծախսը, այսինքն՝ կկանխվեր գնահատման փորձաքննության անցկացման հետ կապված ծախսի առաջացումը:

Ընդ որում, վերը նշված փորձաքննությունը մինչ կառավարիչ նշանակված լինելը կատարված լինելու հանգամանքը որևէ ազդեցություն չի կարող ունենալ դրանից հետո դրսևորած անգործության առումով, իսկ սնանկության գործով որպես կառավարիչ գնահատումից հետո նշանակված լինելու հանգամանքը վերջինիս չէր խոչընդոտում որպես սնանկության գործով կառավարիչ, ձեռնարկել «Սնանկության մասին» ՀՀ օրենքից բխող վերը նշված համապատասխան գործողությունները:

Պարտապանի անունից կնքված պարտապանի գույքի գնահատման պայմանագրով ծախսը հանդիսանալով կառավարչի վարչական ծախս պետք է հենց կառավարչի կողմից որպես իր լիազորությունների կատարում ներառվեր հերթական բաշխման ծրագրով որպես կառավարչի վարչական ծախս և այդ մասով ի սպառ բացակայում է գնահատում իրականացրած սուբյեկտի սնանկության վարույթով պահանջ ներկայացնելու անհրաժեշտությունը (հակառակ պարագայում ոչ մի փորձագետ չի համագործակցի սնանկության կառավարիչների հետ՝ գիտակցելով որ փորձաքննության համար ծախսերը պետք է հատուցվեն պահանջի գրանցման ձևաչափով, լրացուցիչ ծնարաբեռնեղով վերջինին անհարկի գործողություններով սնանկության վարույթով՝ կասկածի տակ դնելով նաև այդ ծախսերի սատցման հեանկարը):

Ինչ վերաբերում է գնահատման պայմանագրով գումարի պահանջով հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու հանգամանքին, ապա այն կարող է քննարկվել բացառապես առանձին քաղաքացիական գործով այդ մասով վեճի առկայության պարագայում, որպիսի տվյալ քննարկվող դեպքում առկա չէ, և հետևաբար՝ չի կարող հանդիսանալ կարգապահական վարույթը բացառող հանգամանք:

Անդրադառնալով կառավարիչի կողմից հայցային վաղեմության կիրառման հանգամանքներին և „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 27.4 հոդվածով նախատեսված, նույն օրենքի 27.3 հոդվածով նախատեսված ժամկետներին, կարգապահական հանձնաժողովը արձանագրում է, որ նախ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով վերոգրյալ նորմերին, արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը: Այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (տե՛ս, *Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասաբօղյանի թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*): Հայցային վաղեմության կիրառման նորմը չի կարող ազդել սույն վարույթին առնչվող հանգամանքին, քանի որ ինչպես կառավարիչների գործունեության ընթացքում, այնպես էլ սնանկության գործընթացի անցկացման ժամանակ, գնահատող կազմակերպությունը պարտավոր չէր և մինչ օրս իրականացրաց ցանկացած կառավարիչի վարույթի պրակտիկ կիրառման ժամանակ, գնահատողը չպետք է հիշեցնի իր կողմից կատարված գնահատման մասին և այդ գնահատումից առաջացած ծախսերի մասին: Իսկ ինչ վերաբերվում է գնահատող կազմակերպության կողմից, խախտման մասին իմանալուն, ապա բնականաբար դիմումատուին չէր կարող իմանալ բաշխման ծրագրի վերաբերյալ, քանի որ վերջինս այդ բաշխման ծրագրի մեջ ներառված չի եղել և բնական է, որ չի էլ ծանուցվել: Վերջինս իմացել է դրա մասին միայն 2024թ.-ի աշնանը, ինչը հաստատվեց կարգապահական վարույթի քննարկման ընթացքում, որը հաստատեց նաև կառավրիչը:

Վերը նշված հանգամանքի առումով կիրառելի է նաև „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 27.4 հոդվածով նախատեսված, նույն օրենքի 27.3 հոդվածով նախատեսված ժամկետներին, համաձայն որի պետք է անկախ ամեն ինչից կարճվի կարգապահական վարույթը / 2) մասնագիտական վարքագծի կանոնները խախտելու հիմքով՝ ենթադրյալ խախտման մասին վարույթ հարուցող մարմնին հայտնի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ հիմքը ծագելուց մեկ տարի հետո/, քանի որ պետք է նշել, որ ինչպես արդեն նշեցինք, քննարկման արդյունքում հայտնի է դարձել, որ դիմումատուն կառավարիչի խախտման մասին իմացել է 2024թ.-ի աշնանը /նշվում է նաև իր դիրքորոշման մեջ, սակայն քննարկման ժամանակ կառավարիչը ընդունեց, որ գնահատող կազմակերպության տնօրենի հետ նշված հարցի շուրջ գրուցել է միայն 2024թ.-ի աշնանը/:

Այսինքն՝ քննարկման արդյունքում հայտնի է դարձել, որ այդ հիմքը ծագել է, ոչ թե 2018թ.-ին երբ կառավարիչը կատարել է բաշխում, այլ այն ժամանակ, երբ ծագել է դիմումատուի դիմում ներկայացնելու իրավունքները, այն է՝ 2024թ.-ի աշնանը, քանի որ ինչպես արդեն հիմնավորեցինք սույն եզրակացությամբ, գնահատող կազմակերպությունը չպետք է ներկայացնեք պահանջ գումարը 2018թ.-ին բաշխելու համար: Միաժամանակ պետք է կրկին անգամ հստակ նշել նաև, որ կառավարիչների գործունեության ընթացքում, մասնավորապես կոնկրետ դեպքում հանձնաժողովի անդամների, որպես կառավարիչի գործունեության ընթացքում /սկսած 5 տարվա պրակտիկաից, մինչև 25 տարվա պրակտիկա ունեցող/ չի եղել նմանատիպ դեպք, որ ցանկացած գնահատող կազմակերպություն պարտավորված է եղել ներկայացնելու դիմու, կամ պահանջ, կամ գրություն, կամ այլ նմանատիպ գրություն, որով պետք է հաստատեր այն հանգամանքը, որը հաստատված է դատարանի որոշմամբ /գնահատման ծառայությունը/ և որի նկատմամբ կատարվող ծախսը կառավարիչը չպետք է հաշվարկի ինքնուրույն և ներառի բաշխման ծրագրի մեջ

Նշված դեպքը էական նշանակություն ունի սնանկության վարույթների անցկացման համար գուտ այն հիմքով, որ այն սնանկության վարույթներում, որտեղ առկա են շարժական կամ անշարժ գույքեր, ինպես նաև այլ ակտիվներ, անհրաժեշտություն է առաջանում գնահատող կազմակերպությունների մասնագիտացված կարծիքն և եզրակացությունը: Նման կազմակերպությունների հետ, կառավարիչը գտնվում է գործարար կապի մեջ, գնահատման ենթարկելով վարույթում առկա ակտիվները և բնականաբար կառավարիչը պետք է կատարի ցանկացած գործողություններ, գումարի առկայության դեպքում, այդ մասնագետին առանձնահերթ վճարելու նպատակով: Ցանկացած պարագայում, կազմակերպության կողմից կատարվել է աշխատանք ի օգուտ սնանկության գործընթացի, ինչու չէ նաև ի օգուտ սնանկության գործով կառավարիչի, քանի որ եթե չլինի գնահատման կազմակերպության հաշվետվությունը, ապա չի լինի նաև գույքի իրացման վերաբերյալ դատարանի որոշումը, որի հիման վրա իրացված գույքից կառավարիչը ստանում է իր վարձատրությունը:

Ելնելով սույն եզրակացության մեջ նշվածից էլ, կարգապահական հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ կառավարիչ Ջիվանշիր Աֆյանի նկատմամբ պետք է կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան

Ա.Մովսիսյան

Ա.Ադամյան

Կից կարգապահական վարույթի նյութերը 25 թերթից